ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արամ Անտոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Վրաստանի Հանրապետություն, Թբիլիսի, հուլիսի 10-12-ը, 2024 թ.

4. **Հրավիրող կողմը.**

   Միգրացիայի միջազգային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը**.

   «Միգրացիայի ներուժի խթանում սոցիալ-տնտեսական զարգացման համար Հայաստանում և Վրաստանում» ծրագրի շրջանակներում փորձի փոխանակման աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**

   - *Քաղաքականության և կառավարման դերը արդյունավետ վերաինտեգրման գործում,*
   - *Վերաինտեգրման աջակցության ծրագրերը և դրանց ազդեցությունը,*
   - *Համայնքային մակարդակում կայուն վերաինտեգրման աջակցությունը:*

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միգրացիայի երևույթը շարունակում է ազդել վերադարձի երկրների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա՝ ներկայացնելով ինչպես հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ: Այս դինամիկայի կարևոր կողմը վերադարձած միգրանտների կայուն վերաինտեգրումն է իրենց հայրենի համայնքներում:

Վերադարձած միգրանտների վերաինտեգրումը բազմակողմանի խնդիր է, որը պահանջում է համապարփակ, ամբողջական և կարիքների վրա հիմնված մոտեցում, որը կարող է ազդել վերաինտեգրման վրա՝ ներառյալ տնտեսական, սոցիալական և հոգեսոցիալական հարթությունները տարածքային, համայնքային և անհատական մակարդակներում: Կայուն վերաինտեգրումը կարևոր է ոչ միայն վերադարձողների բարեկեցության, այլև այն համայնքների սոցիալ-տնտեսական կայունության և զարգացման համար, ուր նրանք վերադարձել են:

Այցի շրջանակներում, հուլիսի 11-ին Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) և Հայաստանի պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներին հյուրընկալեց

Կախեթիի մարզպետի առաջին տեղակալ Պլատոն Կալմախելիձեն: Թելավիում կայացած հանդիպման ընթացքում քննարկվեցին վերադարձած միգրանտների վերաինտեգրման ծրագրի շրջանակներում առկա խնդիրները և այդ ուղղությամբ Վրաստանում, և հատկապես Կախեթիի մարզում կատարված աշխատանքները: Նշվեց, որ միգրացիայի երևույթը շարունակում է ազդել վերադարձի երկրների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա՝ ներկայացնելով ինչպես հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ: Այս դինամիկայի կարևոր կողմը վերադարձած միգրանտների կայուն վերաինտեգրումն է իրենց հայրենի համայնքներում:

Հուլիսի 12-ին Թբիլիսիում կայացավ Կայուն վերաինտեգրման տարածաշրջանային աշխատաժողովը. որը միավորել էր Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներին և նպատակն էր քննարկել առաջացող բոլոր տեսակի խնդիրները՝ հարթակ տրամադրելով շահագրգիռ կողմերին փորձի փոխանակման, լավագույն փորձը բացահայտելու և համագործակցությունը խթանելու, վերաինտեգրման ծրագրերում նորարարական մոտեցումները ներկայացնելու, վերաինտեգրման գործընթացներում ներգրավված շահագրգիռ կողմերի կարողությունները բարձրացնելու համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ժամանակ որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել, կարևորվել է փորձի փոխանակման նպատակով հետագա հանդիպումների ու քննարկումների կազմակերպումը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Քանի որ ՀՀ Շիրակի մարզը համարվում է ծրագրի թիրախային մարզ, նախատեսվում է կազմակերպել քննարկումներ, որից հետո կնախագծվեն առաջիկա անելիքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

16-ը հուլիսի 2024 թ.